

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ. Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը. Երևան, «Նախրի» հրատ., 2002, 542 էջ:

Նշանավոր անհատների մասին աշխատություն ստեղծելը պատմագիտական պատաժանառություն է, որովհետու նման աշխատանքը, բացի անհատի կյանքի ու գործունեության լուսաբանումից, պետք է ներառնի նաև ժամանակի կարևոր անցքերի ու իրադարձությունների ըստ ամենայնի քննությունը, ասել է պատաժան տա այն հարցին, թե որքանով ճիշտ ու արդարացի է գործել տվյալ անձը ելնելով ժամանակների պահանջների ոգուց: Յոհաննես Լեփսիուսի մասին մենագրության ստեղծման պարագայում հեղինակին ներկայացվող նմանօրինակ պահանջը առավել քան ակներկ է, եթե աչքաթող չենք անում այն հանգամանքը, որ Լեփսիուսի գործունեությունն ընթացել է XIX դ. վերջին – XX դ. առաջին տասնամյակներին եվրոպական, հայկական, թուրքական և առհասարակ մերձափրակելյան բարդ, խճճված և որ կարևորն է հակասություններով ու հակամարտություններով լեցուն իրադարձությունների պայմաններում: Բացի այդ, Լեփսիուսի մասին գրելիս հայագիտ հեղինակին պատում է գերմանացի հայասերի հանդեպ ունեցած խոր ակնածանքի և երախտագիտության զգացումը, որովհետեւ, սկզբից ևեթ շետենք, օտարազգի հայասերների մեջ Լեփսիուսի անունը իրոք անզուգական է թերևս հավասարը չունեցող:

Վերը նշված պահանջներից ելնելով է, որ Աշոտ Հայրունին ստեղծել է իր մենագրական ծավալուն աշխատանքը, որտեղ գրսելուքած է գերմանացի մեծ հայասերի հանդեպ հայոց ունեցած համագային պարտքի և երախտագիտության խորը գիտակցումը: Մենք կասեինք բազում արժանապահ նիւթեամբ հետևության մեջ կամ առաջին պատգամի հետ վերջին հանգամանքը նրա

աշխատության ամենաչական կողմերից մեկն է, ուստիև արժանի է հատուկ շեշտադրման:

Ա. Հայրունու գիրքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից, օգտագործված գրականության, անձնանունների և տեղանունների ցանկերից: Առաջին գլուխը վերնագրված է «Առաքելության առաջին տարիները» և ընդգրկում է 1895–1914 թվականները, երկրորդը՝ «Աշխարհամարտի հորձանուտում» 1914–1918 թվականները, իսկ երրորդը՝ «Դր. Յոհաննես Լեփսիուսի և նրա ընկերության հայանվեր գործունեությունն առաջին աշխարհամարտից հետո» (ընդհուսվ մինչև 1943թ.):

Միալված չենք լինի, եթե ասենք, որ Ա. Հայրունու այս աշխատությանը կարելի էր տալ նաև «Յոհ. Լեփսիուսը և հայ ժողովուրդը» վերնագիրը, որովհետեւ գրքի հությունն, իրոք, այդպիսին է:

Թվում է՝ իմաստ չունի գլուխ առ գլուխ վերապատմել աշխատության բովանդակությունը: Առաջել ճիշտ և նպատակահարմար է տալ համառոտ ընութադիրը հիմնական հարցերի և խնդիրների, որոնց շուրջ հեղինակը կառուցել է իր շարադրանքը, մի շարադրանք, որը կատարված է դիտական ներկայացման անթերի մակարդակով, փաստական նյութերի հմուտ օգտագործմամբ և դրանց համադրական մեկնարանմամբ:

«Դր. Լեփսիուսը ստեղծեց քրիստոնեական մարդասիրության և բարեգործության հզոր ավանդություններ, դառնալով մարդկային կարիքների և զրկանքների հանդեպ սիրո, հավատի և տքնանքի աստվածային պատգամի հետևորդը», – այս բանաձեռնմը,

ողը հեղինակը դրել է գրքի վերջարանի հենց սկզբում (էջ 504). Լեփսիուսի համապարփակ գործունեության արժեգործան կվինտ-էսենցիան է և լիովին բացահայտում է մեծ գերմանացու կատարած տևական աշխատանքի էությունը, ավելի ստույգ բխում է այդ էության խոր ըմբռնումից:

Նախ նշենք մենագրության աղբյուրագիտական լայն և արժանահավատ հիմքը: Գա ամենից առաջ Յոհ. Լեփսիուսի և 1895թ. նրա հիմնադրամ «Գերմանական առաքելությունը Արևելքում» (այսուհետև ԳԱԱ) ընկերության պարբերական մամուն է թվով 14 պարբերականներ, որոնք ընդգրում են գրեթե կեսդարյա ժամանակաշրջան՝ 1893–1943 թթ.: Խոսքը առաջին հերթին վերաբերում է “Der christlich Orient”, “Der Orient” և “Orient im Bild” ամսագրերին: Դրանց մի մասը ամփոփում է փաստագրական հարուստ նյութ կատարելով արխիվային փաստաթղթերի և նյութերի մատակարի դեր: Բացի այդ, որպես ԳԱԱ-ի գաղափարախոսական, տեղեկատվական և քարոզչական գործունեության միջոց մամունի այդ օրգանները կարենու դեր էին ստանձնել ընկերության ընթացիկ աշխատանքների լուսաբանման, կամերի ամրապնդման և հասարակության իրագեկման գործում:

Հեղինակը լայնորեն օգտագործել է նաև հիմնականում գերմանական և Հայկական արխիվային նյութեր, ինչպես նաև գերմաներեն ու ռուսերեն հրատարակված շուրջ մեկ տասնյակ փաստաթղթերի ժողովածուներում զետեղված տարաբնույթ տեղեկություններ: Գրքում պատշաճին օգտագործված է նաև հայերեն և օտար լեզուներով լույս տեսած հարուստ դրականությունը, ըստ անհրաժեշտության ցուցաբերված է քննական մոտեցում: Պիտի նշել նաև այն, որ Հեղինակին որոշակիորեն օգնել է գերմաներենի լավ իմացությունը, առանց որի այսօրինակ աշխատություն ստեղծելը պարզեց անհնարին է:

Իրավացի է հեղինակը, երբ չեշտում է. որ Լեփսիուսի և նրա ընկերության հայանապաստ գործունեությունը դարակազմիկ նշանակություն ունեցավ հայ-գերմանական փոխարաբերությունների պատմության մեջ. նա ճիշտ է համարում այն, որ Լեփսիուսի գործունեությանը նվիրված իր աշխատությունը խթանիչ դեր կխաղա նաև «երկու ժողովուրդների մերօրյա կարենոր կապերի ամրապնդման և զարգացման հարցում» (էջ 31): Ընդգծենք, որ նրա մենագրության հետ անկողմնակալ ծանոթությունը լիովին հաստատում է հեղինակի ակնկալիքների ստուգությունը:

Գրքում ցույց է տրված, որ որբախնամ, արտադրական, բժիշկական և բազմաճյուղ այլ աշխատանքների իրականացմամբ Լեփսիուսը իր ընկերության հետ միասին անգնահատելի դեր խաղաց համիդյան կոտորածների վերքերի սպիացման, ապա նաև Մեծ Եղեռնից մագապուրծ հայության բեկորների փրկության և վերընձյուղման գործում «դառնալով հայ ժողովրդի ձայնն ու դատապաշտպանը ոչ միայն Գերմանիայում, այլև աշխարհի այն բոլոր ատյաններում, որտեղ Հայկական հարցը դեռևս բարախում էր» (էջ 504): Ի մի բերելով ընկերության գործունեությունն ըստ էտապների, ցույց է տրվում, որ 1897–1913 թթ. ընթացքում ընկերությունը կարողացավ հայթաթել և իրացնել 3,5 միլիոն, 1914–1921 թթ.՝ 1,7 միլիոն, իսկ 1924–1938 թթ.՝ չուրջ 2 միլիոն մարկ գումարը: Այդ գումարների նշանակությունը պարզելու համար գրքում ցույց է տրված, որ յուրաքանչյուր երեխայի տարեկան խնամքի վրա այդ ժամանակ ծախսվում էր 100 մարկ (ամենաթանկ տարիներին 160–180 մարկ):

Լեփսիուսի հայանպաստ առաքելությունը իրականացվում էր հայ ժողովրդի համար բոլորվին անբարենպաստ քաղաքական իրադրությունների և զարգացումների պայմաններում, որոնց մեջ հայտնվել էր նա XIX դ. վերջին տասնամյակին և XX դ. առաջին քառորդին: Հեղինակը բացա-

Հայտել է այն աներկապահելի ջանքերը, որ թափում էին Լեփսիուսը և նրա ընկերության անդամները դիմակայելով թուրք-գերմանական դաշինքի մարտահրապերներին և գլուխ բերելով Հայերին ցուցաբերվող օգնությունը: Այդ տարիներին ի հայտ է դալիս բարեգործների և Նվիրատուների մի հոծ բազմություն, որը տասնամյակներ շարունակ վիթխարի նյութական աշակցություն ցուցաբերեց Լեփսիուսի և նրա ընկերության Հայանապատճեն նախաձեռնություններին: Մենագրության մեջ ըստ արժանվույն գնահատված է նաև վերջիններիս դերը: ԳԱԱ-ն, Լեփսիուսի գլխավորությամբ և ցուցումով, վտանգված հայ ժողովրդին օգնության գալու նպատակով, հիմնել է փրկարար մասնաճյուղերի մի ամբողջ ցանց: Հեղինակն ըստ ամենայնի անդրադարձել է Արևմտյան Հայաստանում (Ուռչա, Թալաս, Դիարբեքիր), Հյուսիսային Պարսկաստանում (Խոյ) և Բուլղարիայում (Ռիազուկ, Վառնա) տեղական գործունեություն ունեցած հայկական որբանոցների և առհասարակ լեփսիուսյան Հայախնամ հաստատությունների գործունեությանը, ցույց տվել, որ դրա շնորհիվ բազմահազար հայ որբեր և միայնակ այրիներ փրկվեցին մուեցնող սովոր և Համաճարակներից:

Հեղինակը պարզել է մի շատ կարևոր և
Լեփսիուսին ու Նրա առաքելության ան-
դամներին պատիվ բերող հարց ևս, այն, որ
Նրանց գործունեությունը երբեք չէր ու-
ղեկցվում քարողչական միտումներով՝ ելա-
կետ ունենալով ոչ թե ավետարանի քարո-
ղումը, այլ ավետարանի պահանջների իրա-
կանացումը։ Գրքում լուսաբանված է
Նրանց գործունեության այդ ուղեծիրը վի-
ճարկող հասարակական և եկեղեցական
մտայնությունների դեմ մղված սուր և
տեսական պայքարը։

Ճիշտ է վարդել Ա. Հայրունին պարզաբանելով Լեփսիուսի հայանվեր դործունեության շարժառիթները, գտնելով, որ թերի և միակողմանի կիննի դա բացատրել սոսկ Հայ ծողովդի հանգեալ նրա տածած

«մեծ սիրով»: Նա հիմնավորում է խնդրի բազմաշերտ և ընդգրկուն մոտիվները, այն, որ հայ ժողովրդին օգնություն ցուցաբերելու նրա դիրքորոշումը նախ և առաջ թերաբերվում էր անասելի զրկանքների գեմպայքարելու նրա մարդասիրական մղումներով և ապա Արևելքի հայածվող քրիստոնյաներին սատար կանգնելու, իսլամին մարտահրավեր նետած նրա, որպես քրիստոնյա գործչի, շահախնդրություններով:

Հեղինակը աչքաթող չի արել նաև
խնդրի երկրորդ կողմը, այն, որ հայկական
շրջանների հետ ունեցած չփումների և հա-
մապատասխանաբար հայ ազգային ֆենո-
մենը ճանաչելու ընթացքում Լեփսիուսը և
նրա գործընկերները հանգեցին կենսական
կարեռը նշանակովթյուն ունեցող հետևութ-
յան, այն է ի գեմս հայ ժողովրդի նրանք
հայտնագործեցին տարածաշրջանում այն
միակ կարող ուժը. որն ի վիճակի էր
ստանձնել. Արևելքի լուսավորման և զար-
գացման գործը դառնալով Եվրոպայի և
Քերմանիայի գործընկերը:

Մնում է ազելացնել, որ եվրոպական գործիչները դեռ վաղուց էին նկատել և փաստարկել Եվրոպայի և Արևելքի միջնայոց կապող օղակ լինելու, նրանց իրեն կուլտուրաբերոնների կարևոր դերը տնտեսական, քաղաքական և մշակութային գործներացներում։ Հեղինակի հիմնավոր կարծիքով՝ ԳԱԱ-ն մշտապես առաջնորդվում էր Հայ ժողովրդի այդ բացառիկ առաքելության գիտակցումով, իր օգնության գործը համարելով Հայությանը այդ առաքելությանը նախապատրաստելը և ձգտելով «Արևելքի ամենաօժտված ժողովրդին ապահովելու այն գերը, որը վայել էր նրան» (*Der Orient*, 1926, էջ 121):

Մեծ Հումանիստ Լեփսիուսը չէր հաշտ-
վում պետական-քաղաքական շահերով
պայմանավորված և ոչ մի արգելվի հետ:
Հեղինակի բնորոշմամբ նա պատրաստ էր
հրաժարվել այն բանից, ինչը խանգարում
էր նրա սկզբունքներին հրաժարվել եկեղե-
ցական ծառայությունները, անձնական ու-

նեցվածքից և անգամ այն վաղեմի ընկերությաց, ովքեր քաջություն չունեցան հայօգնության աշխատանքների համար առաջացած ծանր պայմաններում հետևելու նրան:

Մեծ մարդասերի կերպարը առավել ամբողջացնելու միտումով մենագրության հեղինակը ցույց է տվել, որ նա Հայաստանի օգնության գործը բացահայտ և ընդհատակյա կերպով շարունակեց նույնիսկ Առաջին աշխարհամարտի տարիներին, գերմանաթուրքական դաշինքի և գրաքննության խստագույն պայմաններում, և չնայած այդ ծանր օրերին շատերը նահանջում էին և լքում նրան, սակայն գա նրան չխանգարեց, նույնիսկ տարագրության և զրկանքների գնով, շարունակելու իր հայանվեր առաքելությունը: «Իմ կյանքի շատ փորձություններից ես կարողացա այն եզրակացությունը կատարել, — ասում է նա իր կյանքի վերջալույսին, — որ երեք վնասներ չեն կրում, երբ պարզապես գործում են ըստ քո համոզմունքի, և որ առանց մտահոգվելու ցանկացած «կյանքի գործ» կարող ես զոհաբերել, եթե ինքդ քեզ հավատարիմ մնալու այլ ճանապարհ չես տեսնում» (*“Der Orient”*, 1925, էջ 105):

Բնութագրելով Առաջին աշխարհամարտի ժամանակ ԳԱԱ-ի գործունեությունը, Հեղինակը նշում է այդ գործունեության երկու կողմը՝ Հայ ժողովրդի բնաջնջումը կասեցնելու և այդ նպատակով Գերմանիայի կառավարությանն ակտիվ միջամտության զրդելու համար ազդեցիկ քաղաքական ուժերի համախմբանն ուղղված աշխատանք և երկրորդ՝ 1916 թվականի վերջից թուրքիայի մեծ քաղաքներում կուտակվող, աքսորը վերապրած բազմահազար հայ որբերի և կանանց համար գոյատևման պայմաններ ստեղծելու ջանքեր: Այս աղերսով հատկանշական է Ա. Հայրունու այն եզրակացությունը, որ այդ ամենը պիտի կատարվեր մի իրադրությունում, երբ Գերմանիայում գրաքննության ուղեկցությամբ իր հաղթարշավն էր կատարում Հայկական հարցը

պատերազմի ընթացքում լուսթյան մատնելու պետական քարոզչությունը: Դաժան էր խղճին և բարոյականությանը ծառայող անհատի բախումը պետական քարոզչության պահանջներին համակերպված միջավայրի հետ: Եվ Լեփսիուսը հաճախ հարկադրված էր նույնիսկ գրեթե միայնակ մնալ և Գերմանիայում սպառելով հասարակության իրազեկման բացահայտ և ընդհատակյա բոլոր հնարավորությունները. մեկնել Հոլանդիա այնտեղ ավելի անկաշկանդ լինելու, հայերի արտերկրի բարեկամների հետ համագործակցության ուղիներ մշակելու և վերջապես սեփական ընկերության վերակազմման միջոցով հայերի «օգնության գործը» կազմակերպական նոր հիմքերի վրա գնելու համար:

Հայանապաստ երեսույթ էին 1916 թ. Գերմանիայում Լեփսիուսի «Տեղեկագիր Թուրքիայում Հայ ժողովրդի գրության մասին» վերնագրով աշխատության հրապարակումը, ինչպես նաև նրա անունով ստացվող և Ուռչա Հայ որբերին առաքվող դրամական օգնությունները:

Դրանց լուսաբանմանը ևս մենագրության հեղինակը կարևոր ուշադրություն է դարձրել: Հավասարապես նույնը պիտի ասել 1916–1918 թթ. Ուռչայում կատարված փրկարար աշխատանքների լուսաբանման մասին, որը, ինչպես մյուս դեպքերում, կատարված է փաստական, չիմնականում նորահայտ նյութերի ընդգրկմամբ և քննությամբ:

Որպես գլխի ամփոփում, անպայման պետք է համաձայնվել այն գնահատականի հետ, որ տրված է մենագրության մեջ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Լեփսիուսի և նրա ընկերության կատարած Հայագրկիչ աշխատանքներին: «Անգերագնահատելի է այն վիթիարի ծառայությունն ու վաստակը, – գրում է Հեղինակը, – որ ունեցան Լեփսիուսն ու նրա հավատարիմ ընկերները աշխարհամարտի տարիներին և այնուհետև ևս հայ աքսորյալների դեռևս կենդանի մնացորդներին վրկե-

լու և երիտթուրքերի ոճրագործությունները հրապարակայնորեն դատապարտելու հարցում» (էջ 508):

Մենագրության վերջին բաժինը ընդգրկում է բավականին երկար ժամանակամիջոց՝ 1918–1943 թթ.: Այստեղ հետազոտված առանձքային հարցերից են Լեփսիուսի իրքե հայասեր գործի և հրապարակախոսի, գործունեության հետզինագագարյան առաջին տարիները, Ուռչայի մասնաճյուղի վիճակը զինադադարից հետո, Լեփսիուսի և նրա ընկերության տարեգործությունը 1920-ական թվականներին, ֆրկարար աշխատանքների ընթացքը նոր մասնաճյուղերում, ինչպես նաև նացիստական վարչակարգի պայմաններում, հարցեր և խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրը նույնպես, ըստ էության, առաջին անգամ է մեր պատմագրության մեջ բարձրացվում և քննության առարկա դառնում:

Մեկ առ մեկ քննելով թվարկված խնդիրները, գրքում ցույց է տրվում, որ Լեփսիուսն ու նրա գլխավորած ընկերությունը, Հաղթահարելով 20-ական թվականներին Գերմանիան համակած տնտեսական դեկարությունները, շարունակեցին փրկարար աշխատանքները արևմտահայության այդ ժամանակ առաջացած երկու մեծ հանդիպաններում՝ Սիրիայում և Լիբանանում: Այդ աշխատանքները շարունակում էին մնալ բազմաբնույթ, ինչպես որ բազմազան էին նոր կարիքներն ու զրկանքները, ընդգծում է Ա. Հայրունին: Ոլրանոցների հիմնում, մահմեդականների կողմից առևենդված հայ երեխաների և կանաց ազատագրում, բուժսպասարկում, աշխատատեղերի ստեղծում, նյութական օգնություն չքափոր ընտանիքներին, բնակչինարարություն, նոր բնակավայրերի հիմնում, վերաբնակեցում: Բացահայտված է միաժամանակ Լեփսիուսի և նրա համախոչների կողմից հրապարակախոսական ճակատում ծավալած պայքարը համաշխարհային հանրությանը Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների իսկական պատկերը

ներկայացնելու և Հայկական հարցին գորավիդ կանգնելու համար:

Գլխի վերջում հեղինակը բացահայտել է այս պայմանները, որոնք 1943 թ. հարկադրեցին ընկերությանը դադարեցնել իր գործունեությունը և ձուլվել Բեռլինի ավետարանական միսիոներական ընկերությանը: 1943 թ. հրապարակվեց ընկերության 1942–1943 թթ. հաշվետու զեկույցը, որն, ընկերության այդ երկու տարիների հաշվետվությունը լինելով հանդերձ, նաև նրա կեսդարյա առաքելության գնահատականն էր: Այստեղ ի միջի այլոց ասված էր. «Մենք չդիտենք, թե գրսում՝ Սիրիայում, իրադարձությունն ինչպես է կերպարանափոխվելու: Այն, թե մենք երբ և ինչպես կկարողանանք աշխատանքը վերսկսել, կախված է պատերազմի ելքից: Մենք, սակայն, մեզ հետ գեպի անորոշ ապագա ենք տանում մի երրորդություն: բազում դժբախտ մանուկների գրկանքներից և կործանումից փրկած լինելու ուրախ դիտակցությունը: Երկրորդ, այստեղ գրսում, գերմանական սիրո և զոհաբերության հուշարձան կառուցած լինելու գիտակցությունը» (էջ 503):

Վերջացնելով մեր ասելիքը, չենք կարող չանդրադառնալ գերմանացի հրապարակախոս Վ. Գուստի հասցեին Ա. Հայրունու միանգամայն տեղին քննադատությունը: Վ. Գուստը, չդիմես ինչ գրդապատճառներով, անհիմն քննադատություն է ուղղել Լեփսիուսի դեմ, վերջինիս մեղադրելով 1919 թ. հրատարակած «Գերմանիան և Հայաստանը» գերմաններեն փաստաթղթերի ժողովածուում իբր թե Գերմանիային միտումնավոր պաշտպանության տակ վերցնելու մեջ (տե՛ս էջ 14, 15, 18, 20–22): Մենք լիովին բաժանում ենք Ա. Հայրունու ծշմարիտ քննադատությունը Գուստի և նրան հեղինակից դարձած թուրք պատմաբան Թաներ Աքչամի հասցեին, որոնք, չխորանալով պատմական անցքերի էության մեջ, անտեղի և անհիմնավոր հանգես են եկել Լեփսիուսի դեմ՝ փաստորեն սեաց-

նելու համար վերջինիս կատարած հսկայածավալ գործը:

Այս աղերսով չենք կարող չնշել նաև, որ գրքում այնքան էլ հստակեցված չէ հայոց եղեռնի իննդրում դերմանական կողմի մեղքի բաժին ունենալու հարցը: Խոսքը վերաբերում է ոչ թե գերմանական ժողովրդին և Թուրքիայում հավատարմագրված գերմանացի դիվանագետներին ու դինական ուժերին, այլ թեթևան-Հոլվեգի կառավարությանը, որը արհամարհելով և անտեսելով 1915 թ. Թուրքիայում գտնված գերմանական բարձրաստիճան զինվորական և դիվանագետական շատ անձանց բողոքներն ու հաղորդումները և ընդառաջելով էնվերի պահանջին, արգելեց Թուրքիայում ներկա դտնվող գերմանական ուժերին դիմակայելու երիտթուրքական կառավարությանը և թույլ չտալու նրան իրականացնելու հայոց

եղեռնը: Գերմանական կառավարությունը գա կարող էր անել բայց չարեց: Մա է հարցի էությունը, մի ինդիր, որը ճշմարտացի լուսաբանված է գեներալ ֆոն Սանդերսի համհարզ, 1915-1918 թթ. Թուրքիայում գտնված Հայնրիխ Ֆիրբյուխերի կողմից:

Ամփոփենք: «Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը» մենագրությամբ Աշոտ Հայրունին ոչ միայն մեր ազգային տուրքն է հասուցել մեծ գերմանացի և նույնքան էլ մեծ հայասեր Լեփսիուսի հիշատակին, այլև միամանակ ստեղծել է գիտական, քաղաքական և հայրենասիրական առումներով մի հիմնավոր աշխատանք, որն այսօր կարող է դիմանալ ամենաիմիստ գիտական քննությանը: Մնում է հուսալ, որ այն կթարգմանվի նաև գերմաներեն՝ դառնալով Հայ-գերմանական կապերի հարատեսությունը հավաստող մերօրյա հուշարձան:

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ